



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 13

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 398-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ կետով, դիմել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման դատական պրակտիկայի վերաբերյալ խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանում տրամադրելու խնդրանքով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 23.1-րդ կետի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա խորհրդի առաջիկա նիստի ընթացքում տալիս է առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանումներ:

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը դատական պրակտիկայի ամփոփման հիման վրա տալիս է օրենքների կիրառման խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանումներ: Դատարանների նախագահների խորհրդի օրենքների կիրառման պարզաբանումները ենթակա են հրապարակման:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով նույն օրենսգրքի 401-րդ հոդվածում և 402-րդ հոդվածի 2-րդ մասում շարադրված պահանջները:

Ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ պարզաբանման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ նորմում հստակ նշված չէ, թե ի՞նչն է դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետի սկիզբ համարվում՝ *դատական ակտի հրապարակման*, թե *դրա պատճենը ստանալու պահը*:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար: Դատական ակտը հրապարակելուց, այն հասցեատիրոջն ուղարկելուց մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, որը կարող է ավելի երկարաձգվել՝ պայմանավորված նաև սուբյեկտիվ գործոններով: Նման պայմաններում անձն իր տնօրինության ներքո հաճախ չի ունենում բողոքարկվող դատական ակտը, հնարավորություն չի ունենում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները կազմել օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ, ինչն իրավաչափորեն հիմք է հանդիսանում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները համապատասխանաբար՝ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու համար: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի

բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, կոնկրետ դեպքում՝ տասնհինգօրյա ժամկետը, ապա նշված ժամկետը պետք է մեկնարկի բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից, առավել ևս, որ օրենսդիրը մի շարք դեպքերում ոչ միայն չի բացառում, այլև որպես դատական ակտի բողոքարկման ժամկետի մեկնարկի սկիզբ ուղղակիորեն նախատեսում է տվյալ դատական ակտը հասցեատիրոջ կողմից ստանալու պահը (օրինակ՝ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մաս, 503-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Լեոնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 23.1-րդ կետով՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տասնհինգօրյա ժամկետի սկիզբ համարել համապատասխան դատական ակտը հասցեատիրոջ կողմից փաստացիորեն ստանալու կամ գործնականում օրենքով սահմանված կարգով նրան հասու լինելու պահից:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

03 սեպտեմբերի 2013թ.
ք. Ստեփանակերտ